ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«18» 01 2023թ.
№ 77/18/2-49

«ԼԵՄՈՒՐ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 08213544)
տնօրեն Տ. Վարտանովին
հասցե՝ ՀՀ ք. Երևան, Բաղրամյան 1փկղ.,
14 շ.,բն. 147
էլ. հասցե՝ lemurtradllc@gmail.com
հեռ. 094 288 834

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԼԵՄՈՒՐ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի միջև 20.09.2022թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-22-16/3-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԼԵՄՈՒՐ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն 2022թ. 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ քան 15.11.2022թ., պետք է մատակարարեր 1 հատ էլեկտրական պարամետրերի չափման գործիքներ /Հողանցման դիմադրության ստուգման աքցան/, սակայն «ԼԵՄՈՒՐ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում ապրանք չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. հունվարի 17-ին, միակողմանի ամբողջությամբ, լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ԼԵՄՈՒՐ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո, 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 14 213 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի ապահովման գումարը կազմում է 113 700 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին, իսկ որակավորման ապահովման գումարը կազմում է 170 550 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին: Ընդ որում, Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում, պայմանագրի և որակավորման ապահովման գումարները մինչև 27.01.2023թ. ներառյալ, Ձեր կողմից վճարվելու դեպքում՝ «ԼԵՄՈՒՐ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 27.01.2023թ ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2070 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ